

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 9/2

22 հուլիսի 2014 թ.

Քննարկվեց «Գրանդ Պետրոլիում» ՍՊԸ 25.06.2014 թ-ի դիմում-գանգատը ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ 21.05.2014 թ-ի թիվ 1009106 ստուգման ակտի դեմ:

«Գրանդ Պետրոլիում» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 18.09.2013 թ-ի թիվ 1009106 հանձնարարագրի «Գրանդ Պետրոլիում» ՍՊԸ-ում ՀՀ ԿԱ ՊԵԿ Մաշտոցի հարկային տեսչության կողմից իրականացվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Ստուգման արդյունքում 21.05.2014 թ-ին կազմվել է թիվ 1009106 ակտը, համաձայն որի հանձնարարագրում ներառված ստուգման հարցերից որևէ մեկի գծով չի հայտնաբերվել որևէ խախտում կամ լրացուցիչ հարկային պարտավորություն բացառությամբ բնապահպանական վճարների, որոնց մասով արձանագրվել է հետևյալը.

Ընկերությունը խախտելով «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի 3-րդ, 8-րդ և 10-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջները՝ պակաս է հաշվարկել և բյուջե վճարել բնապահպանական վճարներ, այն է՝

| | |
|--------------------------------|---------------|
| 2011 թ-ի 4-րդ եռամսյակի համար՝ | 213.679 դրամ, |
| 2012 թ-ի 1-ին եռամսյակի համար՝ | 201.740 դրամ, |
| 2012 թ-ի 2-րդ եռամսյակի համար՝ | 52.707 դրամ, |
| 2012 թ-ի 3-րդ եռամսյակի համար՝ | 319.266 դրամ, |
| 2012 թ-ի 4-րդ եռամսյակի համար՝ | 58.398 դրամ, |
| 2013 թ-ի 1-ին եռամսյակի համար՝ | 358.146 դրամ, |
| 2013 թ-ի 2-րդ եռամսյակի համար՝ | 51.466 դրամ: |

Ընդհանուր առմամբ ստուգվող ժամանակաշրջանում պակաս է հաշվարկվել և բյուջե վճարվել 1.255.402 դրամ բնապահպանական վճար: Ինչպես նաև «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդված 3-րդ կետի համաձայն հաշվարկվել է 0,2%-ի չափով տույժ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար բյուջե պակաս վճարված բնապահպանական վճարների նկատմամբ, որը համապատասխանաբար կազմել է՝

| | |
|--------------------------------|---------------|
| 2011 թ-ի 4-րդ եռամսյակի համար՝ | 155.985 դրամ, |
| 2012 թ-ի 1-ին եռամսյակի համար՝ | 147.270 դրամ, |
| 2012 թ-ի 2-րդ եռամսյակի համար՝ | 38.476 դրամ, |
| 2012 թ-ի 3-րդ եռամսյակի համար՝ | 233.064 դրամ, |
| 2012 թ-ի 4-րդ եռամսյակի համար՝ | 42.630 դրամ, |
| 2013 թ-ի 1-ին եռամսյակի համար՝ | 261.446 դրամ, |
| 2013 թ-ի 2-րդ եռամսյակի համար՝ | 30.159 դրամ: |

Ստուգման ակտը մասնակիորեն բողոքարկվում է, քանի որ ակտով առաջադրված բնապահպանական վճարները հաշվարկվել է սխալ և անհասկանալի, մասնավորապես՝

- 2011 թ-ի 4-րդ և 2012 թ-ի 4-րդ եռամսյակների համար բնապահպանական վճարները հաշվարկելիս կիրառվել են տարբեր իրարամերժ սկզբունքներ,

- 2012 թ-ի 1-ին, 2012 թ-ի 3-րդ և 2013 թ-ի 1-ին եռամսյակների համար բնապահպանական վճարները հաշվարկելիս ՀՀ ներմուծված և իրացված՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների իրացման շրջանառության նկատմամբ 1%-ի չափով հաշվարկված բնապահպանական վճարներից չի պակասեցվել նույն ապրանքների ներմուծման համար մաքսային հայտարարագրերում առանձնացված և պետական բյուջե վճարված բնապահպանական վճարները՝ հաշվետու ժամանակաշրջանում իրացված ապրանքին համամասնորեն:

Ըստ ընկերության հաշվապահական հաշվառման տվյալների, ստուգվող ժամանակաշրջանի համար բնապահպանական վճարները հաշվարկվել են հետևյալ կերպ՝

| Հաշվետու եռամսյակ | ՀՀ ներմուծված և իրացված՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների իրացումից հասույթ | Իրացումից առաջացած բնապահպանական վճար (իրացումից հասույթ X 1%) | Իրացված ապրանքների ներմուծման համար մաքսային հայտարարագրերում առանձնացված և պետական բյուջե վճարված բնապահպանական վճար | Պակասեցումից հետո բյուջե վճարման ենթակա բնապահպանական վճար |
|-------------------|---|--|---|--|
| 2011թ. 4-րդ եռ. | 117 835 408 | 1 178 354 | 964 675 | 213 679 |
| 2012թ. 1-ին եռ. | 20 174 090 | 201 741 | 160 033 | 41708 |
| 2012թ. 2-րդ եռ. | 32 358 980 | 323 590 | 270 883 | 52 707 |
| 2012թ. 3-րդ եռ. | 31 926 657 | 319 267 | 264 388 | 54 879 |
| 2012թ. 4-րդ եռ. | 163 007 938 | 1 630 079 | 1 362 093 | 267 986 |
| 2013թ. 1-ին եռ. | 64 803 664 | 648 037 | 602 995 | 45 042 |
| 2013թ. 2-րդ եռ. | 31 104 913 | 311049 | 259 582 | 51467 |
| Ընդամենը՝ | 461 211 650 | 4 612 117 | 3 884 649 | 727 468 |

Արդյունքում, ստուգվող ժամանակաշրջանի համար ավել է հաշվարկվել ընդհանուր առմամբ 527.934 դրամ բնապահպանական վճար (1 255 402 դրամ - 727 468 դրամ), 385.392 դրամ տույժ (527 934 դրամ X 0,2% X 365 օր):

Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ ընկերությունը խնդրում է 21.05.2014 թ-ի թիվ 1009106 ակտը մասնակիորեն ճանաչել անվավեր և վերահաշվարկի արդյունքում ակտով առաջադրված 1.255.402 դրամ բնապահպանական վճարը նվազեցնել ավել հաշվարկված 527.934 դրամով, իսկ 909.030 դրամ տույժը նվազեցնել ավել հաշվարկված 385.392 դրամով, որի արդյունքում բնապահպանական վճարների գծով բյուջե գանձման է առաջադրվում 1.251.106 դրամ, այդ թվում՝ 727.468 դրամ բնապահպանական վճար և 523.638 դրամ հաշվարկված տույժ:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

«Գրանդ Պետրոլիում» ՍՊԸ ներկայացուցչի և ստուգման ակտը կազմած պաշտոնատար անձանց բերված փաստաթղթերի համադրման արդյունքում Հանձնաժողովը եկավ եզրակացության, որ ստուգման ակտով բնապահպանական վճարների գծով լրացուցիչ առաջադրված պարտավորությունները ենթակա են վերանայման, քանի որ բնապահպանական վճարները տարբեր ժամանակահատվածների համար հաշվարկվել են տարբեր սկզբունքներով, մասնավորապես՝ « \ll տարածք ներմուծված և իրացված շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների իրացման շրջանառության նկատմամբ 1%-ի չափով հաշվարկված բնապահպանական վճարներից չի պակասեցվել նույն ապրանքների ներմուծման համար մաքսային հայտարարագրերում առանձնացված և պետական բյուջե վճարված բնապահպանական վճարները՝ հաշվետու ժամանակաշրջանում իրացված ապրանքին համամասնորեն:

Բնապահպանական վճարների հաշվարկման եղանակի հստակեցման արդյունքում ստացվել են հետևյալ տվյալները.

| Հաշվետու եռամսյակ | « \ll ներմուծված և իրացված՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների իրացումից հասույթ» | Իրացումից առաջացած բնապահպանական վճար (իրացումից հասույթ X 1%) | Իրացված ապրանքների ներմուծման համար մաքսային հայտարարագրերում առանձնացված և պետական բյուջե վճարված բնապահպանական վճար | Պակասեցումից հետո բյուջե վճարման ենթակա բնապահպանական վճար |
|-------------------|---|--|---|--|
| 2011թ. 4-րդ եռ. | 71 381 218 | 713 812 | 602 798 | 111 014 |
| 2012թ. 1-ին եռ. | 4 922 333 | 49 223 | 40 056 | 9 167 |
| 2012թ. 2-րդ եռ. | 19 340 813 | 193 408 | 155 506 | 37 903 |
| 2012թ. 3-րդ եռ. | 23 883 466 | 238 835 | 185 315 | 53 519 |
| 2012թ. 4-րդ եռ. | 141 517 729 | 1 415 177 | 1 166 104 | 249 073 |
| 2013թ. 1-ին եռ. | 54 362 766 | 543 628 | 497 700 | 45 928 |
| 2013թ. 2-րդ եռ. | 23 720 630 | 237 206 | 198 388 | 38 818 |
| Ընդամենը՝ | 339 128 956 | 3 391 290 | 2 845 867 | 545 423 |

Ելնելով վերոգրյալից՝ պակաս հաշվարկված բնապահպանական վճարի չափն ըստ եռամսյակների կկազմի.

- 2011 թ-ի 4-րդ եռամսյակում 111.014 դրամ,
- 2012 թ-ի 1-ին եռամսյակում 9.167 դրամ,
- 2012 թ-ի 2-րդ եռամսյակում 37.903 դրամ,
- 2012 թ-ի 3-րդ եռամսյակում 53.519 դրամ,
- 2012 թ-ի 4-րդ եռամսյակում 249.073 դրամ,
- 2013 թ-ի 1-ին եռամսյակում 45.928 դրամ,
- 2013 թ-ի 2-րդ եռամսյակում 38.818 դրամ:

Արդյունքում, ստուգվող ժամանակաշրջանում պակաս է հաշվարկվել և բյուջե վճարվել ընդամենը 545.423 դրամ բնապահպանական վճար:

Հիմք ընդունելով «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» « \ll օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթները պակաս վճարված բնապահպանական վճարների նկատմամբ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հաշվարկվում է 0.2%-ի չափով տույժ, համապատասխանաբար՝

2011 թ-ի 4-րդ եռամսյակի համար՝ 81.041 դրամ,

2012 թ-ի 1-ին եռամսյակի համար՝ 6.692 դրամ,
2012 թ-ի 2-րդ եռամսյակի համար՝ 27.669 դրամ,
2012 թ-ի 3-րդ եռամսյակի համար՝ 39.069 դրամ,
2012 թ-ի 4-րդ եռամսյակի համար՝ 181.824 դրամ,
2013 թ-ի 1-ին եռամսյակի համար՝ 33.527 դրամ,
2013 թ-ի 2-րդ եռամսյակի համար՝ 22.748 դրամ:

Ընդամենը 2011 թ-ի 4-րդ եռամսյակից մինչև 2013 թ-ի 2-րդ եռամսյակն ընկած ժամանակահատվածի համար պակաս վճարված բնապահպանական վճարների նկատմամբ հաշվարկված տույժի գումարը կազմել է ընդամենը 392.570 դրամ:

Ելնելով վերոգրյալից՝ բնապահպանական վճարների գծով բյուջե գանձման ենթակա գումարը կազմում է ընդամենը 937.993 դրամ, այդ թվում՝ բնապահպանական վճար 545.423 դրամ, տույժ՝ 392.570 դրամ:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ 21.05.2014 թ-ի թիվ 1009106 ստուգման ակտի 10-րդ կետով առաջադրված պարտավորությունները նվազեցնել ընդամենը 1.226.439 դրամով, այդ թվում՝ բնապահպանական վճար 709.979 դրամ, տույժ 516.460 դրամ:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ